ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հունիսի 2016թ. թիվ 182-Ա

«ԼԱՎԱԳՈՒՅՆ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂ» ԿՈՉՈՒՄՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ
ԵՎ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐԵՐՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.17 կետի «ա» ենթակետով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2016թ. մարտի 22-ի թիվ 30 կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի առաջարկությունը՝ Լոռու մարզի բուժհաստատություններում, ըստ անվանակարգերի, 2016թ. «Տարվա լավագույն բուժաշխատող» կոչումներ շնորհելու նպատակով՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. 2016թ. «Ստացիոնարի լավագույն բժիշկ» կոչումը շնորհել «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի բժիշկ Գևորգ Պետրոսի Ազարյանին:
2. 2016թ. «Պոլիկլինիկական լավագույն բժիշկ» կոչումը շնորհել «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի բժիշկ Մարինե Միսակի Բեզոյանին:
3. 2016թ. «Պոլիկլինիկական լավագույն բուժքույր» կոչումը շնորհել «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի բուժքույր Վերգինե Սպարտակի Հայրապետյանին:
4. 2016թ. «Ստացիոնարի լավագույն բուժքույր» կոչումը շնորհել «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի բուժքույր Էլսիկ Մկրտչի Քեշիշյանին:
5. 2016թ. «Գյուղական ամբուլատորիայի լավագույն բժիշկ» կոչումը շնորհել «Մեծ Պարնիի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ի բժիշկ Մարինե Ժորժիկի Լամբարյանին:
6. 2016թ. «Առողջապահության բնագավառում մեծ ներդրում ունեցող բժիշկ» կոչումը շնորհել «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի բժիշկ Անահիտ Հրաչիկի Հակոբյանին:
7. 2016թ. «Առողջապահության համակարգին աջակցող բարեգործ կամ կազմակերպություն» կոչումը շնորհել «Դիակոնիա» բարեգործական կազմակերպությանը:
8. Բուժաշխատողի օրվա կապակցությամբ և բարեխիղճ աշխատանքային գործունեության համար ՀՀ Լոռու մարզպետի շնորհակալագրերով պարգևատրել հետևյալ բուժաշխատողներին՝ համաձայն հավելվածի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2016թ. հունիսի 16
ք.Վանաձոր